

## **Դասախոսություն 1.2. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս պացիենտի իրավունքները**

**Պացիենտ** է հանդիսանում բժշկական օգնության և սպասարկման սուբյեկտ՝ դիմող, ստացող, հանդիսացող ֆիզիկական անձը:

Պացիենտի իրավունքները սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքով, ինչպես նաև մի շարք օրենքներով, որոնք ծածկում են հարակից ոլորտները, օրինակ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, «Մարդու իմունային անբավարարության վիրուսով առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենք և այլն:

Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մարդու իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Պացիենտի իրավունքները բխում են մարդու քաղաքացիական և քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից, որոնք սահմանված են և երաշխավորվում են թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ միջազգային պատթաղթերով և մի շարք ներպետական փաստաթղթերով:

### ***Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք***

**«Բժշկական օգնության և սպասարկման մասին»** ՀՀ օրենքի հոդված 5-ը սահմանում է՝ «Բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից»: Պացիենտի իրավունքների համատեքստում այն հաճախ անվանում են գաղտնիության իրավունք:

Նույն օրենքի հոդված 19-ը «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտականությունները և պատասխանատվությունը» սահմանում է, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են՝

**ԲԱԺԻՆ 1. Պացիենտի իրավունքների և խտրականության վերաբերյալ ընդհանուր տեղեկություն**

ե) ապահովել մարդու բժշկի օգնությանը դիմելու փաստի, նրա առողջական վիճակի մասին հետազոտման, ախտորոշման և *բուժման ընթացքում*<sup>\*</sup> պարզված տեղեկությունների *գաղտնիությունը*, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից.

Բացի նշված օրենքից, մարդու առողջական վիճակի մասին տեղեկատվության գաղտնիությունը պաշտպանված է նաև «*Անձնական տվյալների պաշտպանության մասին*» ՀՀ օրենքով, որն անձի առողջական վիճակին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները դասում է *հատուկ կատեգորիայի անձնական տվյալներին* (օրենքի հոդված 3 կետ 1 ենթակետ 13), որոնց մշակումը արգելվում է նույն օրենքի հոդված 12-ով:

***Հոդված 12. Հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելու առանձնահատկությունները***

1. Առանց անձի համաձայնության արգելվում է հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը, բացառությամբ, երբ տվյալի մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձնական տվյալների մշակումն անհապաղ դադարեցվում է, եթե վերացել են տվյալները մշակելու հիմքերը և նպատակը:

*Գաղտնիության իրավունքը* բխում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանվող «Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության» և «Անձնական տվյալների պաշտպանության» երաշխիքներով:

*Մասնավոր և ընտանեկան կյանքի* անձեռնմխելիությունը պաշտպանված է նաև միջազգային դաշնագրերով, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը և ստանձնել է այդ փաստաթղթերի իրականացման պատրավորությունը:

***Սահմանադրության հոդված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը***

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:
2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ

<sup>\*</sup> Բուժման ընթացքում պարզված տեղեկությունների մեջ մտնում է նաև այն տեղեկատվությունը, որը բուժական տեղեկատվություն չէ, բայց բուժաշխատողին հայտնի է դարձել, օրինակ՝ հիվանդության պատմություն հավաքելիս:

բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

***Սահմանադրության հոդված 34. Անձնական տվյալների պաշտպանությունը***

1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:
2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:
3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:
4. Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
5. Անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող մանրամասները սահմանվում են օրենքով:

Բժշկական գաղտնիքը խախտելու համար ՀՀ Քրեական օրենսգրքով նախատեսված է պատիժ տուգանքի կամ ազատազրկման տեսքով, որոշակի ժամկետներով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով:

***ՀՀ Քրեական օրենսգիրք, հոդված 145. Բժշկական գաղտնիքը հրապարակելը***

1. Առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները, որոնք անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ՝ պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:



### ՀՈՒՇՈՒՄ

Անձնական և բժշկական գաղտնիքը պաշտպանող դրույթները պարունակում են «բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից» ձևակերպումը: Ինչպիսի՞ մոտեցում դրսևորել, երբ ձեզնից որևէ անձ կամ գերատեսչություն պահանջում է բժշկական գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն:

1. Հիշե՛ք, որ բժշկական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության պահպանման համար պատասխանատուն բուժաշխատատղն է, այլ ոչ թե հարցում ներկայացնող կողմը: Հաճախ է լինում, երբ հարցումը ներկայացվում է թե՛ օրենսդրական հիմքերի, թե՛ ընթացակարգային խախտումներով: Նման դեպքերում օրենքը պարտավորեցնում է **ԶՏՐԱՄԱՂՐԵԼ** բժշկական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը:
2. Պահանջե՛ք, որ հարցումը ներկայացված լինի գրավոր տեսքով
3. Պահանջե՛ք, որ նշված լինեն տեղեկատվության հարցման հիմքերը
4. Պահանջե՛ք, որ հարցման մեջ տրվի հղում այն օրենքին (օրենքի անվանում, հոդված և այլն) որին համաձայն բժիշկը կամ հաստատությունը պարտավոր է տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

### Գաղտնիության իրավունքի հնարավոր խախտումների օրինակներ

- Բժիշկն առանց պացիենտի համաձայնության հրապարակում է նրա կողմից թիրամիջոցներ գործածելու կամ դրանցից կախվածության պատմությունը:
- Որոշ ձևաթղթերում կառավարությունը պահանջվում է ՄԻԱՎ կարգավիճակի մասին տեղեկությունների հրապարակում:
- Բուժաշխատողները, որպես սեռական առողջությանն առնչվող ծառայություններ տրամադրելու պայման, պահանջում են որպեսզի երիտասարդները ձեռք բերեն ծնողների համաձայնությունը:

## **Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք**

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը հաճախ դիտարկվում է որպես քրեական արդարադատության հետ առնչվող իրավունք, սակայն լինում են դեպքեր, երբ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման ռիսկ է առաջանում:

Մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը երաշխավորված է թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ մի շարք միջազգային փաստաթղթերով:

Ինչպես և քրեական արդարադատության մեջ, այնպես էլ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը սահմանափակելիս պետք է ապահովվեն լինեն օրինականության և համաչափության սկզբունքները: Այսինքն, իրավունքի սահմանափակումը կարող է լինել միայն օրենքով նախատեսված դեպքերում և անկախ դատարանի որոշմամբ:

Մարդու Իրավունքների Կոմիտեն (ՄԻԿ) նշել է, որ պացիենտի ցանկությանը հակառակ հոգեբուժական հաստատությունում բուժումն իրենից ներկայացնում է ազատությունից զրկում: Այս համատեքստում ՄԻԿ-ը համարել է, որ առանց դատարանի որոշման հոգեկան առողջության հիմքով 14-օրյա ազատազրկումը խախտում է մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը:

### ***Սահմանադրության հոդված 25. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք:***

1. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
2. Բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:
3. Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:

***Քաղաքացիական և Քաղաքական Իրավունքների Միջազգային Դաշնագիտ 9-րդ հոդվածի 1-ին մաս.***

Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չպետք է ենթարկվի կամայական ձերբակալման կամ կալանքի: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:

**Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հնարավոր խախտումների օրինակներ**

- Առանց բժշկի եզրակացության անձն անորոշ ժամանակով կալանավորվել է հոգեկան առողջության հիմքով:
- Հաստատությունում գտնվողները տեղեկացված չեն, որ իրավունք ունեն դիմել դատարան և վիճարկել իրենց կամքին հակառակ այդտեղ գտնվելը:
- Թմրամիջոց օգտագործող կինը ծննդաբերությունից հետո պահվում է հիվանդանոցում և նրան մերժում են իր երեխայի խնամակալության հարցում:

## Տեղեկատվության իրավունք

Տեղեկատվության իրավունքը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ սեփական առողջության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու պացիենտի իրավունք և հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և բուժման, ինչպես նաև մարդու առողջության վրա ազդեցություն ունեցող այլ տեսակի տեղեկատվության մատչելիության իրավունք:

ՀՀ Բժշկական օգնության և սպասարկման մասին օրենքը սահմանում է մարդու սեփական առողջության մասին տեղեկատվության ստանալու իրավունքը, ինչպես նաև ստացված բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ տեղեկատվության տրամադրելու բուժաշխատողների պարտականությունը:

### **Բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքի հոդված 7.**

#### **«Առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու մարդու իրավունքը»**

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

Մարդու առողջական վիճակի մասին տեղեկությունը նրա կամքին հակառակ չի կարող հաղորդվել նրան կամ այլ անձանց, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից:

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտների առողջական վիճակի մասին տեղեկությունները տրվում են նրանց օրինական ներկայացուցիչներին:

### **ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ**

«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» օրենքը սահմանում է, որ 14-18 տարեկան երեխաների ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը կատարվում է օրենքով սահմանված կարգով նրանց (երեխայի) նրանց դիմումով կամ համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Այստեղ առաջանում է հակասություն երկու օրենքների միջև, որն իրավաբաններն անվանում են «իրավական կոլիզիա»: Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի նման դեպքերում սահմանում է, որ հատուկ օրենքը հանդիսանում է գերակա և, հետևաբար, տվյալ դեպքում պետք է առաջնորդվել «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» օրենքի

դրություն:

**Բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքի հոդված 19.**

**«Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտականությունները և պատասխանատվությունը»**

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են՝

ա) ...

բ) ...

գ) յուրաքանչյուրին ապահովել նրան տրամադրվելիք բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի, մեթոդների, ծավալների, տրամադրման կարգի և պայմանների մասին տեղեկատվության տրամադրումը.

դ) յուրաքանչյուր մարդու կամ բժշկական օգնության համար այլ վճարողների պահանջով տրամադրել անհրաժեշտ տվյալներ պացիենտին ցուցաբերած բժշկական օգնության և սպասարկման քանակական ու որակական բնութագրիչների և այդ նպատակով կատարված ծախսերի մասին.

ե) ...

Առողջության իրավունքի վերաբերյալ իր ընդհանուր մեկնաբանության մեջ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն տեղեկատվության մատչելիության վերաբերյալ տվել է հետևյալ ձևակերպում՝

Բուժօգնության մատչելիությունը «ներառում է առողջապահական հարցերի վերաբերյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և հայտնելու իրավունքը»:

Տեղեկատվության իրավունքի իրացման օրինակներն են՝

- անչափահասների համար ապահով և բարենպաստ միջավայրի ստեղծում, ինչը նրանց հնարավորություն կտա մասնակցել իրենց առողջության վրա ազդող որոշումների կայացմանը, ձեռք բերել կյանքի հմտություններ, ձեռք բերել համապատասխան տեղեկություններ, ստանալ խորհրդատվություն և բանակցել իրենց կատարած առողջապահական վարքագծի ընտրության շուրջ: Նման գործողություններին է վերաբերվում դպրոցական ծրագրերում «Առողջ ապրելակերպ» դասընթացի ներդրում:
- Կանանց համար հասանելի դարձնել վերարտադրողական առողջության, ընտանիքի պլանավորման, հակաբեղմնավորիչների վերաբերյալ տեղեկատվությունը:
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, թմրամիջոցների օգտագործման դեմ, հակաձխախտային քարոզարշավների իրականացում:



***Պացիենտների իրավունքների մասին «Բժիշկների համաշխարհային ասոցիացիայի» 7-րդ հոչակագիր***

ա) Պացիենտն իրավունք ունի ստանալ իրեն վերաբերող տեղեկություններ, որոնք գրանցված են իր բժշկական փաստաթղթերում և ամբողջովին իրազեկ լինել իր առողջության վիճակի, այդ թվում իր վիճակին առնչվող բժշկական փաստերի մասին: Սակայն պացիենտի փաստաթղթերում առկա երրորդ կողմի վերաբերյալ գաղտնի տեղեկությունները չպետք է տրամադրվեն պացիենտին՝ առանց այդ երրորդ կողմի համաձայնության:

բ) Բացառիկ դեպքերում, պացիենտին կարելի է տեղեկատվություն չտրամադրել, եթե հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ այդ տեղեկատվությունը լրջորեն կվնասի նրա կյանքը կամ առողջությունը:

գ) Տեղեկատվությունը պետք է տրամադրվի պացիենտի մշակույթին համապատասխան և պացիենտին հասկանալի եղանակով:

դ) Իր բացահայտ խնդրանքով պացիենտն իրավունք ունի չտեղեկանալ, եթե դա անհրաժեշտ չէ այլ անձի կյանքը պաշտպանելու նպատակով:

ե) Պացիենտն իրավունք ունի ընտրել նրան, ով պետք է տեղեկանա իր անունից:

**Տեղեկատվության իրավունքի հնարավոր խախտումների օրինակներ**

- Կառավարությունն արգելում է թմրամիջոցների գործածման հետ կապված վնասի կամ վնասի նվազեցման վերաբերյալ նյութերի հրապարակումը՝ մեկնաբանելով, որ դա խթանում է անօրինական գործողությունները:
- Երիտասարդներին դիտավորյալ մերժում են տեղեկություններ տրամադրել սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների (ՍՃՓՀ) և պահպանակների օգտագործման վերաբերյալ՝ մեկնաբանելով, որ դա կխրախուսի անկանոն սեռական կյանք վարելը:
- Կառավարությունը թաքցնում է հանքի բնապահպանական և առողջապահական հավանական բացասական ազդեցության մասին տեղեկատվությունը ազդակիր համայնքների բնակիչներից:

## **Մարմնի անձեռնմխելիության իրավունք**

ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածով երաշխավորվում է մարմնի անձեռնմխելիությունը: Մասնավորապես հոդվածի 4-րդ մասով սահմանվում է՝ «Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին»:

### ***Բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքի հոդված 8***

#### ***Համաձայնություն բժշկական միջամտության համար***

Մարդու համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից:

Բուժողի կամ պացիենտի պահանջով համաձայնությունը կարող է լինել նաև գրավոր:

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտին, ինչպես նաև այն դեպքերում, երբ պացիենտի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը, բժշկական միջամտության համար համաձայնությունը տրվում է նրա օրինական ներկայացուցչի կողմից:

Օրինական ներկայացուցչի բացակայության դեպքում, եթե բժշկական միջամտությունը հետաձգման ենթակա չէ, բժշկական միջամտության վերաբերյալ որոշումը, ելնելով պացիենտի շահերից, կայացվում է բժշկական խորհրդակցության (կոնսիլիումի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկի կողմից:

Մարմնի անձեռնմխելիության իրավունքն դիտարկելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել վերարտադրողական իրավունքը:

***Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքը*** հոդված 9-ում հետևյալ կերպ է ձևակերպումն է տալիս՝

Յուրաքանչյուր զույգ կամ յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝

- ա) որոշել իր երեխաների թիվը և նրանց ծնվելու ժամկետները.
- բ) անցանկալի հղիությունից և հղիության արհեստական ընդհատումից խուսափելու նպատակով օգտվել ընտանիքի պլանավորման արդյունավետ և անվնաս միջոցներից ու մեթոդներից, դրանց վերաբերյալ ստանալ անհրաժեշտ տեղեկություններ:

## **ԲԱԺԻՆ 1. Պացիենտի իրավունքների եւ խտրականության վերաբերյալ ընդհանուր տեղեկություն**

գ) հղիության ընթացքում ստանալ հղիության և ծննդաբերության հետ կապված բժշկական օգնություն և սպասարկում՝ պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Հղիության արհեստական ընդհատումը և բժշկական ամլացումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ոք, ներառյալ դեռահասը, իրավունք ունի տեղեկություններ ստանալ իր սեռական առողջության պահպանման հարցերի, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, դրանց բարդությունների և հետևանքների մասին:

## **Մարմնի անձեռնմխելիության իրավունքի հնարավոր խախտումների օրինակներ**

- ՄԻԱՎ վարակ ունեցող կնոջը, առանց իր համաձայնության, կապում են արգանդի փողերը (բժշկական ամլացում):
- Բժիշկները ստիպում են թմբամուլ հղի կնոջն արհեստական ձևով ընդհատել հղիությունը:
- Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների բուժումը իրականացվում է առանց նրանց համաձայնության, քանի որ ենթադրվում է, որ նրանք զուրկ են իրենց բուժման և խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնելու կարողությունից:
- Հոգեբուժական հիվանդանոցում պացիենտների բուժման մաս է կազմում փորձարկվող կլինիկական դեղամիջոցը, սակայն նրանք տեղյակ չեն, որ ընդգրկված են հետազոտության մեջ:

## Կյանքի իրավունք

Մարդու կյանքի իրավունքը երաշխավորվում է թե՛ միջազգային, թե՛ ներպատական փաստաթղթերով, մասնավորապես՝ Քաղաքացիական և Քաղաքական Իրավունքների Միջազգային Դաշնագրի 6-րդ և ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածներով:

### **ՔՔԻՄԴ 6-րդ հոդվածի 1-ին մաս.**

Յուրաքանչյուր մարդ ունի կյանքի իրավունք: Այդ իրավունքը պետք է պաշտպանվի օրենքով: Ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի կյանքից:

### **ՀՀ Սահմանադրություն**

#### **Հոդված 24. Կյանքի իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:
2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:
3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Մարդու Իրավունքների Կոմիտեն մեկնաբանելով «Կյանքի իրավունքը» մանրամասնել է պետությունների որոշ պարտավորություններ, նշելով՝

Կյանքի իրավունքը «չպետք է նեղ» կամ «սահմանափակ կերպով մեկնաբանվի» և դրա պաշտպանության համար «անհրաժեշտ է, որպեսզի պետությունները **դրական միջոցառումներ** ձեռնարկեն՝ ... կյանքի տևողությունը երկարացնելու համար»:

Հիվանդությունների կանխարգելումը, բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելը հանդիսանում են այդպիսի **«դրական միջամտություններ»**:

Կյանքի իրավունքի պաշտպանության պարտավորությունը առավել արտահայտված է ազատագրկման վայրերում գտնվող անձանց նկատմամբ:

### **Կյանքի իրավունքի հնարավոր խախտումների օրինակներ**

- Հրդեհի ժամանակ թմրամիջոց գործածող պացիենտները մահանում են հիվանդանոցի կողպված հիվանդասենյակում՝ որպես հրդեհային վատ անվտանգության արդյունք:

**ԲԱԺԻՆ 1. Պացիենտի իրավունքների և խտրականության վերաբերյալ ընդհանուր տեղեկություն**

- Կառավարությունը կամայական իրավական սահմանափակումներ է սահմանում կյանքը փրկող ՄԻԱՎ-ի կանխարգելման կամ բուժման մատչելիության նկատմամբ:
- Քրեակատարողական հիմնարկում մահացության մակարդակը հատկապես բարձր է ձմեռային ամիսների ընթացքում՝ շենքային վատ պայմանների, անհամապատասխան սանիտարական վիճակի և ջեռուցման ու խնամքի վատ որակի պատճառով:
- Հոգեբուժական հիվանդանոցի պացիենտը, որը ինքնասպանություն կարող է գործել, պատշաճ կերպով չի վերահսկվում և արդյունքում իրեն զրկում է կյանքից:

***Խոշտանգումներից և դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունք***

Խոշտանգումների դեմ հռչակագիրը խոշտանգումներին տալիս է հետևյալ ձևակերպումը՝ «Խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամի ջոցներից մի այն կամ հատուկ են դրանց:

Ժամանակի ընթացքում խոշտանգման բնութագրությունը ընդլայնվել է և ներառել է նաև «անգործություն» եզրույթը:

Օրինակ՝ քրեակատարողական հիմնարկում գտնվող մարդուն ՄԻԱՎ վարակախի կամ տուբերկուլոզի բուժում չտրամադրելը որակավորվում է որպես անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձին հարցաքննության ընթացքում «զրկանքի» հետ կապված օգնություն չցուցաբերելը որակավորվում է որպես խոշտանգում, դաժան կամ անմարդկային վերաբերմունք:

***Քաղաքացիական և Քաղաքական Իրավունքների Միջազգային Դաշնագրի ՔՔԻՄԴ 7-րդ հոդված.***

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Մասնավորապես, ոչ ոք չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել ***բժշկական կամ գիտական փորձերի:***

***ՀՀ Սահմանադրություն***

***Հոդված 26. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ***

### **պատժի արգելքը**

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
2. Մարմնական պատիժներն արգելվում են:
3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

### **Խոշտանգումներից և դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի հնարավոր խախտումների օրինակներ**

- Իրավապահների հետապնդումից վախենալով՝ բժիշկը մերժում է հիվանդի ցավը մեղմելու նպատակով մորֆին նշանակելը:
- Կալանքի տակ գտնվող անձին մե բժում են տրամադրել հոգեբուժական օգնություն և փոխարենը փակում մե նախցում:
- ՁԻԱՀ-ի բաժանմունքի անձնակազմը թույլատրում է հեռուստատեսության տեսախցիկներով նկարահանել պացիենտներին առանց նրանց համաձայնության և նկարահանվածը հեռարձակել տեղական հեռուստատեսությամբ:
- Հաստատությունում գտնվող կանանց պարտադրում են պահանջում են արական սեռի աշխատակիցների հսկողության ներքո իրար հետ լոգանք ընդունել:

### **Օգտակար գրականություն և հղումներ.**

1. ՀՀ Սահմանադրություն <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>
2. ՀՀ օրենք Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120781>
3. ՀՀ օրենք Անձնական տվյալների պաշտպանության մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120901>
4. ՀՀ Քրեական օրենսգիրք <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125137>
5. ՀՀ օրենք Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120793>
6. Մարդու իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս. Գործնական ուղեցույց <https://www.opensocietyfoundations.org/sites/default/files/Pracitioner-Guide-Armenia-Armenian-20130516.pdf>

**ԲԱԺԻՆ 1. Պացիենտի իրավունքների և խտրականության վերաբերյալ ընդհանուր տեղեկություն**